

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	10
5.1. Բյուջեի եկամուտները	10
5.2. Բյուջեի ծախսերը	12
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	13
5.4. Պետական պարտք	13
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ	15
6.2. Ավանդներ	15
6.3. Վարկեր	16
6.4. Դրամական փոխանցումներ	19
7. ԱՄՓՈՓՈՒՄ	19

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ


Ռուս-ուկրաինական հակամարտության սրման հետևանքով դեպի ՀՀ կապիտալի և մարդկանց ներհոսքով պայմանավորված ՀՀ-ում գրանցվում է էապես բարձր տնտեսական ակտիվության աճի ցուցանիշներ: Սեպտեմբերին փոքր-ինչ դանդաղելուց հետո տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կրկին արագացել է՝ հոկտեմբերին կազմելով 17.5%: Սեպտեմբերի դանդաղումը որոշ չափով պայմանավորված էր նաև Ադրբեյջանի կողմից սանձազերծված ռազմական գործողություններով, ինչը ցույց տվեց, որ ՀՀ տնտեսական աճը բավական խոցելի է, և աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության արդյունքում այն կարող է նվազել: Կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշը նույնպես արագացել է՝ հասնելով 14.5%-ի՝ նախորդ ամսվա 14.1%-ի դիմաց:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների և առևտրի աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ին կազմել են 5.8-ական տոկոսային կետ: Արդյունաբերության աճը նույնպես նշանակալի նպաստում է ունեցել, որը կազմել է 2.6 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2022թ. հունվար-հոկտեմբերին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը¹, %



Ի տարբերություն ՍԱՑ-ի արագացմանը, արդյունաբերության ոլորտում գրանցվել է աճի դանդաղում: Հոկտեմբերի տվյալներով արդյունաբերության աճը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ կազմել է 9.7%, այն դեպքում, երբ սեպտեմբերին աճը կազմել էր 14.8%: Ընդ որում, վերջինս նույնպես էապես

¹ Արդյունաբերության ոլորտի նախորդ ամիսների աճերի ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում հունվար-հունիս, հունվար-հուլիս և հունվար-օգոստոս ամիսների աճերը վերանայվել են դեպի վերև՝ 0.1-ական տոկոսային կետով:


դանդաղել էր օգոստոսի համեմատ: Արդյունքում, արդյունաբերության աճը հունվար-հոկտեմբերին կազմել է 9.9%՝ դանդաղելով 0.1 տոկոսային կետով:

2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով² արդյունաբերության աճը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 19.1% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է 11.3 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում անկման տեմպը մեղմվել է՝ հունվար-օգոստոսին արձանագրված 7.9%-ից դառնալով 6.4%: Վերջինս ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 1.7 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ հանքարդյունաբերության ոլորտում անկում է ապրում մետաղական հանքաքարի արդյունահանումը (անկումը՝ շուրջ 7.5%), իսկ հանքարդյունաբերության այլ ճյուղերում արձանագրվել է 31.7% աճ:

Արդյունաբերության աճին նպաստել է նաև «էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» և «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի աճերը՝ համապատասխանաբար 0.3 և 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ծավալների աճի տեմպը փոքր-ինչ արագացել է: Շինարարության աճն ընթացիկ տարվա հոկտեմբերին կազմել է 15.1%՝ սեպտեմբերի համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Կուտակային՝

² 2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

հունվար-հոկտեմբեր ամիսների աճի տեմպը նույնպես փոքր-ինչ արագացել է՝ հասնելով 14.4%-ի:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների աճը որոշակի դանդաղումից հետո կտրուկ արագացել է: 2022թ. հոկտեմբերին ծառայությունների աճը կազմել է 34.9%՝ սեպտեմբերի համեմատ արագանալով շուրջ 8.6 տոկոսային կետով: Հունվար-հոկտեմբեր ամիսների աճը նույնպես արագացել է՝ հասնելով 27.9%-ի:

2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով³ ծառայությունների աճն առավելապես պայմանավորված է «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», «տեղեկատվություն և կապ» և «տրանսպորտ» ենթաճյուղերի աճերով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.8, 6.0 և 4.3 տոկոսային կետ:

³ 2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտի աճի տեմպը նույնպես արագացել է: Քանի որ առևտրի և ծառայությունների ոլորտների աճը հիմնականում պայմանավորված է դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքի աճով, ապա դրանց շարժընթացները նույնպես նման է իրար: Այսպես, ինչպես ծառայությունների դեպքում, առևտրի աճը նույնպես որոշակիորեն դանդաղել է օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, իսկ հոկտեմբերին արագացել է՝ կազմելով 23.1%: Հունվար-հոկտեմբեր ամիսների աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 15.5%:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ⁴, %



Ապրանքների արտահանման ծավալները շարունակում են խոշոր աճեր գրանցել, սակայն աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է: Նախորդ ամսվա համեմատ ապրանքների արտահանման աճի տեմպը դանդաղել է 33.7 տոկոսային կետով և կազմել 124.8%, որը սակայն նույնպես բավական բարձր ցուցանիշ է: Կուտակային աճը շարունակում է արագանալ՝ հունվար-հոկտեմբեր ամիսներին կազմելով 71.2% և նախորդ ամսվա համեմատ արագանալով 6.7 տոկոսային կետով:


2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով⁵ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման շուրջ 174.8% աճով (շուրջ 2.7 անգամ), որի նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է 17.7 տոկոսային կետ: Արտահանման աճին էական նպաստում են ունեցել նաև «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 11 անգամ աճը, որը 16.8 տոկոսային կետ նպաստում է ունեցել արտահանման աճին: Այս երկու ապրանքախմբերի բարձր աճերը, ինչպես նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի արտահանման շուրջ 6.4 անգամ աճը (նպաստումը՝ 4.5 տոկոսային կետ) պայմանավորված են վերարտահանմամբ: Նշանակալի են եղել նաև «պատրաստի սննդի արտադրանք» և «ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված

⁴ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. հունվար-հունիս և հունվար-օգոստոս ամիսների արտահանման աճի ցուցանիշները բարելավվել են 0.1-ական տոկոսային կետով, իսկ հունվար-սեպտեմբեր ամիսների ցուցանիշը՝ 0.7 տոկոսային կետով:

⁵ 2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

իրեր» ապրանքախմբերի արտահանման աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 8.7 և 4.3 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁶, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես որոշակիորեն դանդաղել է, սակայն մնացել է բավական բարձր մակարդակում: 2022թ. հոկտեմբերին ներմուծման ծավալը նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ աճել է 74.4%-ով, որը թեև բավական բարձր ցուցանիշ է, սակայն նախորդ ամսվա համեմատ ցածր է շուրջ 8.5 տոկոսային կետով: Մինչդեռ հունվար-հոկտեմբեր ամիսների ներմուծման աճի ցուցանիշն արագացել է՝ հասնելով 63.5%-ի՝ նախորդ ամսվա 61.9%-ի դիմաց:

Ներմուծման աճին նույնպես ամենամեծ նպաստում ունեցող ապրանքախմբերն են (հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով⁷) «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»-ը և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»-ը, որոնց նպաստումները կազմել է համապատասխանաբար 14.2% և 7.0%: Նշանակալի է նաև «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճերը, որոնք ընդհանուր ներմուծմանն ունեցել են համապատասխանաբար 8.9 և 5.9 տոկոսային կետ նպաստում:

⁶ ՀՀ վիճակագրական կոմիտեն վերանայել է ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները, ինչի արդյունքում 2022թ. մարտից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածի կուտակային աճի ցուցանիշները բարելավվել են 0.2-ից 0.5 տոկոսային կետով:


⁷ 2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2022թ. հունվար-սեպտեմբերին անվանական աշխատավարձի աճի տեմպը բավական բարձր է եղել⁸, սակայն գնաճը շարունակել է իրական աշխատավարձի աճը պահել ցածր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա համեմատ աճել է 13.4%-ով՝ կազմելով 225,436.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 4.5%-ով և կազմել 180,099.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 16.2%-ով՝ կազմելով 245,305.0 դրամ:

Միևնույն ժամանակ, 2022թ. հունվար-սեպտեմբերին սպառողական գների միջին մակարդակն աճել է 8.6%-ով, ինչի պայմաններում իրական աշխատավարձն աճել է 4.4%-ով, իսկ պետական հատվածում՝ նվազել է շուրջ 3.8%-ով: Ընդ որում, պետական հատվածում են ներառվում նաև ուսուցիչները և պետական հաստատություններում աշխատող բժիշկները, ինչը նման պատկերը ավելի մտահոգիչ է դարձնում:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2021-2022թթ. հունվար-սեպտեմբերին, %



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հոկտեմբերի տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)




ՀՀ դրամի արժևորումը շարունակվել է հոկտեմբերի վերջից սկսած, և դրամը շարունակել է էականորեն արժևորված մնալ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ 2022թ. հունվար-հոկտեմբերին արժևորվել է շուրջ 14.5%-ով, իսկ եվրոյի նկատմամբ՝ 28.8%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը վերջին ամիսներին դանդաղել է՝ կապված ՌԴ ռուբլու դիրքերի ամրապնդման հետ, և հունվար-հոկտեմբերին կազմել է 5.5%:

ՀՀ դրամի արժևորման տեմպը օգոստոս-սեպտեմբեր ամիսներին որոշակիորեն կայունանալուց հետո, հոկտեմբերին շարունակվել է, ինչի արդյունքում ՀՀ դրամի միջին ամսական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 409 դրամից հոկտեմբերին դարձել է 403 դրամ, իսկ նոյեմբերի ընթացքում կազմել է 395 դրամ:

Նոյեմբերին ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.5 տոկոսային կետով՝ հասցնելով այն 10.5%, սակայն այդ գործոնը արժույթային շուկայի վրա էական ազդեցություն չի ունեցել:

Գծապատկեր 11. ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքի օրական միտումները և ՀՀ ԿԲ շուկայական գործառնությունների տոկոսադրույքը 2022 թվականին



5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁹

5.1. Բյուջեի եկամուտները


Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը վերջին ամիսներին դանդաղում է՝ պայմանավորված հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղմամբ: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2022թ. հունվար-հոկտեմբերին աճել են 23.1%-ով՝ նախորդ ամսվա 24.9%-ի փոխարեն: Հարկային եկամուտների աճը կազմել է 22.4%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.8 տոկոսային կետով: Ընդ որում, հարկային եկամուտների ամսական աճերը ավելի արագ են դանդաղում: Այսպես, հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ հարկային եկամուտների աճը կազմել է 8.3%, այն

⁹ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

դեպքում, երբ նախորդ ամիսներին (փետրվարից մինչև օգոստոս) հարկերի ամսական աճի տեմպը միջին հաշվով գերազանցել է 24%-ը: Հարկերի աճի տեմպի դանդաղումը առավելապես պայմանավորված է մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի գործողության դադարեցմամբ:

Պետական բյուջեի ոչ հարկային եկամուտները 2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին աճել են շուրջ 39.9%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ շուրջ 81.5%-ով:

Գծապատկեր 12. Հարկային եկամուտների կուտակային աճը, %




Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի (աճը՝ 19.7%), շահութահարկի (աճը՝ 43.3%) և պետական տուրքի (աճը՝ շուրջ 2.2 անգամ) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի աճին կազմել են համապատասխանաբար 6.8, 4.7 և 4.0 տոկոսային կետ: Ինչպես նշվեց, հարկային եկամուտների աճի տեմպի դանդաղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մետաղական հանքանյութերի արտահանման տուրքը սեպտեմբերից հանվել է, հետևաբար դրա նպաստումն ընդհանուր հարկային եկամուտներին կտրուկ նվազել է:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2021թ. հունվար-հոկտեմբեր		2022թ. հունվար-հոկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	12.7	12.7	22.4	22.4
ԱԱՀ	16.2	5.4	19.7	6.8
Շահութահարկ	6.7	0.8	43.3	4.7
Եկամտային հարկ	2.1	0.6	10.0	2.8
Ակցիզային հարկ	-9.0	-0.8	9.7	0.7
Շրջանառության հարկ	20.8	0.5	26.7	0.6
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	17.3	0.6	60.3	2.4
Մաքսատուրք	30.0	1.4	-29.6	-1.6
Սոցիալական վճար	77.9	1.4	47.7	1.3
Այլ հարկային եկամուտներ	84.7	1.5	17.5	0.5
Պետական տուրք	67.7	1.6	115.2	4.0

5.2. Բյուջեի ծախսերը


Գծապատկեր 13. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը սկսում է աստիճանաբար արագանալ: 2022թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են շուրջ 7.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.5 տոկոսային կետով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը կազմել է 4.7%՝ արագանալով 0.5 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերն աճել են 38.6%-ով՝ կազմելով 201.2 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի՝ ընթացիկ տարվա 10 ամիսների ընթացքում իրականացված ծավալը, լինելով զգալի բարձր նախորդ տարվա համեմատ, դեռևս չի հասել առաջին ինն ամիսների պլանային ցուցանիշին՝ 250.4 մլրդ դրամին:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 14. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը -), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



Հունվար-հոկտեմբերի արդյունքներով պետական բյուջեն եղել է պակասուրդային: Հոկտեմբերին բյուջեի ծախսերը էականորեն գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում 2022թ. հունվար-հոկտեմբերի տվյալներով, ձևավորվել է բյուջեի պակասուրդ շուրջ 13.0 մլրդ դրամի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ձևավորվել էր շուրջ 202 մլրդ դրամ պակասուրդ:

5.4. Պետական պարտք


2022թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը գերազանցել է 10 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանը և կազմել 10,063.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ աճելով 9.3%-ով: Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես աճել է՝ կազմելով 9,524.6 մլն ԱՄՆ դոլար և 2021թ. նույն ամսվա համեմատ ավելանալով 9.0%-ով: Դրամային

արտահայտությամբ, սակայն, և՛ պետական, և՛ կառավարության պարտքերը նվազել են՝ համապատասխանաբար 9.5 և 9.7 տոկոսով:

Պարտքի աճը հիմնականում պայմանավորված է եղել ներքին պարտքի շուրջ 57.2% աճով (դրամային արտահայտությամբ պարտքն աճել է 30.1%-ով), իսկ արտաքին պարտքը նվազել է շուրջ 10.3%-ով: Տարեսկզբի համեմատ կառավարության պարտքն աճել է 8.6%-ով կամ 756.6 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված ներքին պարտքի աճով:

Հոկտեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքների աճ է գրանցվել: Մասնավորապես, կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) Նախորդ ամսվա համեմատ աճել է 0.7 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ պարտատոմսերինը՝ 0.6 տոկոսային կետով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պարտատոմսերի եկամտաբերություններն աճել են համապատասխանաբար 2.7 և 2.0 տոկոսային կետով: Տոկոսադրույքների աճի հիմնական պատճառը ՀՀ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումն է, որն ավելի շոշափելի չափով ազդում է պետական պարտատոմսերի վրա, քան ֆինանսական շուկայի այլ տոկոսադրույքների (հատկապես վարկերի և ավանդների տոկոսադրույքների) վրա: Արդյունքում ԿԲ տոկոսադրույքի բարձրացումը գնաճի վրա ունենում է թույլ ազդեցություն:


Գծապատկեր 15. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ



Գծապատկեր 16. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպը կայունացել է բարձր մակարդակում: Վերջին ամիսներին գնաճի տեմպը տատանվում է 9-ից 10%-ի միջակայքում: Հոկտեմբերին արձանագրվել է 9.5% գնաճ: Ինչպես նշվեց նախորդ բաժիններում, ՀՀ ԿԲ-ն շարունակել է բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով այն 10.5%-ի, ինչը, սակայն, ավելի շատ ազդում է պետական պարտատոմսերի տոկոսադրույքների վրա, քան գնաճի տեմպի դանդաղման վրա:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 17. Ավանդների 12-ամսյա աճը, %



2022թ. հոկտեմբերին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալները զգալիորեն աճել են: 2022թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալները նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել են 25.3%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 9 տոկոսային կետով: Ավանդների աճի՝ նման կտրուկ արագացումը պայմանավորված է ոչ ռեզիդենտների ավանդների 66.2 տոկոս աճով: Ընդ որում, հոկտեմբերին կտրուկ աճել են ոչ ռեզիդենտների արտարժույթային ավանդները՝ շուրջ 323 մլրդ դրամով (շուրջ 801 մլն ԱՄՆ դոլարով):

Գծապատկեր 18. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին շուրջ 14.7 տոկոսային կետով դրական նպաստում են ունեցել ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները: Ռեզիդենտների շարքում աճել է ձեռնարկությունների ավանդների նպաստումը՝ դառնալով 5.5 տոկոսային կետ (նախորդ ամսվա 4.5-ի դիմաց), իսկ տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճն ընդհանուր ավանդների աճին նպաստել է 4.4 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


2022թ. հոկտեմբերին վարկերի աճը շարունակել է արագանալ փոքր քայլերով: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2022 թվականի հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 4.2%-ով՝ արագանալով 0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 19. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալները աճել են շուրջ 1.6%-ով և ընդհանուր վարկերի աճին ունեցել են 0.1 տոկոսային կետ նպաստում: Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալներն աճել են 4.3%-ով և վարկերի ընդհանուր ծավալին ունեցել 4.1 տոկոսային կետ նպաստում:

Գծապատկեր 20. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 13% աճով: Պորտֆելում իրավաբանական անձանց վարկերը շարունակում են նվազել:

Գծապատկեր 21. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների¹⁰ շարքում վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 32.3%, իսկ նպաստման չափը՝ 5.3 տոկոսային կետ: Գյուղատնտեսության և շինարարության ոլորտներին տրամադրվող վարկերը նույնպես աճել են, և դրանց նպաստումը ընդհանուր վարկերի աճին կազմել է համապատասխանաբար 0.6 և 0.2 տոկոսային կետ: Սպառողական վարկերը երկար ժամանակ նվազելուց հետո փոքր աճ են գրանցում վերջին երկու ամիսներին՝ հոկտեմբերին աճելով 1.1%-ով և ընդհանուր վարկերին ունենալով 0.3 տոկոսային կետ դրական նպաստում:

¹⁰ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 22. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹¹



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի մեծ ծավալները պահպանվում են: 2022թ. սեպտեմբերին, բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 309 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա 292.1-ի դիմաց և նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է ավելի քան 3.3 անգամ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությամբ դեպի ՀՀ կապիտալի և մարդկանց ներհոսքով պայմանավորված, ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) տեմպը շարունակում է բարձր մնալ, սակայն անկայունության ռիսկերը պահպանվում են: Սեպտեմբերին ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը որոշակիորեն դանդաղել էր, իսկ փոխարժեքը՝ որոշակիորեն արժեզրկվել՝ կապված Ադրբեյջանի կողմից սանձազերծված ռազմական գործողություններով: Վերջինս ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսական աճն ապահովող գործոնները զգայուն են և իրավիճակի փոփոխության դեպքում կարող են չեզոքանալ: Հետևաբար, թեև աճի տեմպը հոկտեմբերին արագացել է, այնուամենայնիվ, պետք է քայլեր ձեռնարկել արտաքին դրական գործոնների

¹¹ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը ԱՄՆ դոլարով:

2022թ. հոկտեմբերի ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

չեզոքացման պարագայում տնտեսության դիմադրողականությունն ավելացնելու ուղղությամբ:

2. ՀՀ արտաքին առևտրի բարձր աճերն ավելի են արագացել:

Արտահանման և ներմուծման ծավալները շեշտակի աճել են՝ հիմնականում պայմանավորված վերարտահանվող ապրանքատեսակների՝ մասնավորապես «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի աճերով: Այս երևույթը նույնպես դիսկեր է պարունակում, քանի որ արտաքին աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխության պարագայում այն կարող է հանկարծակի կանգ առնել՝ հանգեցնելով բացասական տնտեսական հետևանքների:

3. Բանկային համակարգում կտրուկ աճել են ոչ ռեզիդենտների արտարժութային ավանդները: Այս փաստն այլ պայմաններում կարող էր դրական երևույթ դիտարկվել, քանի որ ցույց է տալիս դեպի ՀՀ ոչ ռեզիդենտների հետաքրքրության աճ: Սակայն այն ներկա պայմաններում որոշակի ռիսկեր է պարունակում ֆինանսական համակարգի համար: Մասնավորապես, նախորդ տարվա հոկտեմբերի համեմատ բանկերի պորտֆելում էապես մեծացել են արտարժութային պարտավորությունները (ավանդները)՝ շուրջ 560 մլրդ դրամով (1.4 մլրդ դոլարի չափով): Իսկ արտարժութային ակտիվները (վարկերը) նույնիսկ նվազել են: Փոխարենը ավելացել են դրամային ակտիվները (վարկերը)՝ շուրջ 424 մլրդ դրամով: Այս իրավիճակը ՀՀ դրամի արժեզրկման պարագայում էական ռիսկեր կարող է առաջացնել բանկային համակարգում:

4. Պետական բյուջեն դարձել է պակասուրդային, որը, սակայն, հեռու է պլանավորված մակարդակից: Հունվար-հոկտեմբեր ամիսների տվյալներով, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 13 մլրդ դրամ, մինչդեռ 9 ամսվա ճշտված պլանով այն պետք է լիներ 232.4 մլրդ դրամ, իսկ տարվա ճշտված պլանը կազմում է 218.8 մլրդ դրամ: Նման շեղումների արձանագրման հարցում էական նշանակություն ունի կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը: Վերջիններս աճում են նախորդ տարվա համեմատ, սակայն պլանավորված մակարդակի համեմատ առկա է էական թերակատարում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: